ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

**ՈՐՈՇՈՒՄ**

**2009թ. հուլիսի 28-ի թիվ 224-Ն**

# ՕՖՇՈՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 11-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության կողմից 2009թ. ապրիլի 2-ին հրապարակված միջազգայնորեն համաձայնեցված հարկային ստանդարտին տարածքների համապատասխանության վերաբերյալ առաջընթացի հաշվետվությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել օֆշորային տարածքների ցանկը՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հոկտեմբերի 25-ի «Բանկային վերահսկողության նպատակով օֆշորային տարածքների ցանկը հաստատելու մասին» թիվ 518-Ն որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչությանը, ֆինանսական դիտարկումների կենտրոնին, ինչպես նաև ֆինանսական համակարգի քաղաքականության և ֆինանսական կայունության վարչությանը հանձնարարել ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան երկու տարին մեկ անգամ վերանայել Հավելված 1-ով հաստատված օֆշորային տարածքների ցանկը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում  հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ — Ա. Ջավադյան

**Հավելված** 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 224-Ն որոշման

**Օֆշորային տարածքների ցանկ**

1. Մոնսերրաթ
2. Նաուրու
3. Նիու
4. Գվատեմալա
5. Ուրուգվայ

*(Հավելվածը խմբ. 21.02.12 թիվ 39-Ն)*